ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 878-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. «4.4.3 Կրթություն և գիտություն բաժնի»՝

1) 13-րդ ծրագրային դրույթի՝

ա. 13.2 միջոցառման՝

3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» իրավական ակտի մշակման նպատակով հանձնաժողովի ձևավորում և աշխատանքների կազմակերպում, նյութերի հավաքագրում, ուսումնասիրում, ամփոփում»։

4-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» իրավական ակտի Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը։

բ. 13.5 միջոցառման

3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և գիտության ոլորտի, այդ թվում ՀՀ ԳԱԱ համակարգը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերի մշակման նպատակով աշխատանքային խմբի ձևավորում և աշխատանքների կազմակերպում, նյութերի հավաքագրում, ուսումնասիրում, ամփոփում»,

4-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը։

Գիտության ոլորտի, այդ թվում ՀՀ ԳԱԱ համակարգը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերի մշակում և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացում»,

5-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության զարգացման 2 ծրագրի մշակում և հաստատում։

2) 14-րդ ծրագրային դրույթի 14.2 միջոցառման 4-րդ սյունակի սկզիբը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգ»-ի հաստատում»։

3) 15-րդ ծրագրային դրույթի

ա.15.1 միջոցառման

3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը» հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարություն ներկայացում»,

4-րդ սյունակում «5» թիվը փոխարինել «2»-ով։

5-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «4»-ով և «5» թիվը փոխարինել «2»-ով։

6-րդ սյունակում առաջին «5» թիվը փոխարինել «4»-ով և երկրորդ «5» թիվը փոխարինել «2»-ով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյան

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N878–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N878–Ն որոշման «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» հավելվածի 4.4.3 «Կրթություն և գիտություն» բաժնի 13., 14. և 15. կետերով նախատեսված միջոցառումները կոչված են կանոնակարգելու գիտության ոլորտն ամբողջությամբ՝ առնվազն առաջիկա 1-2 տասնամյակներում: Դրանք ունեն հասարակական մեծ հնչեղություն և կարիք ունեն գիտական հասարակայնության լայն շրջանակներում հավուր պատշաճի քննարկումների, 2-3 ամիսների ընթացքում՝ ներգրավելով ոլորտի լավագույն մասնագետներին:

Վերոհիշյալ միջոցառումների անվանումները և կատարման ժամկետները Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրին համահունչ և համադրելի դարձնելու նպատակով՝ ՀՀ վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 01/23.1/3473-08 հանձնարարականի համաձայն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն առաջարկում է այդ միջոցառումները ներգրավել ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում:

Նշված միջոցառումների կատարման ժամկետների տեղափոխությունը 2009 թվական պայմանավորված է նաև ՀՀ Կառավարության սոցիալական վարչության 2008թ. հոկտեմբերի 20-ի թիվ 02/14.1/3406.08 գրությամբ ներկայացված զեկուցագրի 4-րդ կետով՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացման պետական ռազմավարությանը» հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ»-ը պետք է նախորդի մյուս միջոցառումներին, քանի որ դրանք բխելու են գիտության զարգացման պետական ռազմավարությունից: Ուստի նպատակահարմար է դրանց կատարումը տեղափոխել 2009 թվական:

Նշված փոփոխությունների և լրացումների արդյունքում՝ միջոցառումների կատարման ժամկետները 2009թ. տեղափոխումը հնարավորություն կընձեռի ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեին, պահանջված որակով և նշված ժամկետներում մշակել իրավական ակտերի նախագծերը, կազմակերպել հասարակական լայն քննարկումներ և իրականացնել ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված գիտության ոլորտի բարեփոխումներն ապահովող կետերը։

Ս. Սեյրանյան